

ԿԱՐԾԻՔ

Հասմիկ Արամի Խաչատրյանի՝ «Բանավոր խոսքի զարգացման հիմնախնդիրը միջին դպրոցում» խորագրով ԺԳ. 00. 02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (հայոց լեզու)» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Հասմիկ Խաչատրյանի «Բանավոր խոսքի զարգացման հիմնախնդիրը միջին դպրոցում» թեմայով ատենախոսությունը խրախուսելի և ուշագրավ անդրադարձ է գիտամանկավարժական և հասարակական առումներով իսկապես շատ կարևոր մի խնդրի: Բանավոր խոսքի զարգացումը, ինչ խոսք, թե՛ անհատական, թե՛ հասարակական կարևորության խնդիր է, որ վերաբերում է յուրաքանչյուր անհատի իր ողջ կյանքի ընթացքում և յուրաքանչյուր հասարակության՝ իր զարգացման բոլոր փուլերում: Ընդ որում՝ թե՛ անհատի պարագայում, թե՛ հասարակության պարագայում բանավոր խոսքը այսպես թե այնպես զարգանում է: Յուրաքանչյուր անհատ վաղ մանկության տարիներից, երբ նոր-նոր ճանաչում է աշխարհը և յուրացնում շրջապատի խոսքը, շարունակաբար բնական ճանապարհով հարստացնում է իր բառապաշարը և տիրապետում խոսքում բառերի կապակցման օինաչափություններին, այնուհետև՝ լեզվաոճական հնարքներին: Հասարակությունն էլ իր կենսագործունեության ընթացքում անընդհատ առնչվում է նոր իրողությունների, հասկացությունների, որոնք պետք է ունենան իրենց լեզվական նշանակիչները և կիրառվեն խոսքում, միաժամանակ՝ խոսքի գործածության մշտական հոլովություն ի հայտ են գալիս հնչյունաքերականական նորանոր զարգացումներ: Խնդիրն այն է, որ յուրաքանչյուր ձևավորված հասարակություն ստեղծում է հասարակական տարբեր երևույթների ուղղորդման, կարգաբերման եղանակներ ու միջոցներ, որոնցով ջանում է ապահովել ավելի արդյունավետ և նպատակային զարգացումներ: Ասվածը նախ և առաջ վերաբերում է կրթադաստիարակչական աշխատանքներին, այն է՝ մանկավարժությանը: Փաստ է, որ հնուց ի վեր և մինչև օրս էլ մանկավարժության կենտրոնական խնդիրներից մեկը բանավոր և գրավոր խոսքի զարգացումն է, և պատահական չէ, որ հնագույն ժամանակներից դպրոցներում ուսուցանվել են քերականություն ու ճարտասանություն:

Ջուգահեռաբար եղել են ուսուցման խնդիրներին տեսական անդրադարձներ, որոնց ներկայացումով էլ իր աշխատանքը սկսել է աստենախոսության հեղինակը: Դիտարկելով հարցին առնչվող արձարծումները հնագույն քաղաքակրթություններում՝ Եգիպտոսում, Միջագետքում, Չինաստանում, առավել հանգամանորեն՝ Հունաստանում և Հռոմում, Հ.Խաչատրյանը անդրադառնում է նաև ճարտասանության զարգացմանը հայ իրականության մեջ՝ սկսած Տիգրան Մեծի ժամանակներից: Իրավացիորեն մատնանշվում է հետագայում հայ եկեղեցու դերը, որի հովանու ներքո վանական դպրոցներում և վարդապետարաններում ուսուցանվող յոթ ազատ արվեստների մեջ էին քերականությունն ու ճարտասանությունը: Աստենախոսության հեղինակը առավել հանգամանորեն է ներկայացնում է հարցի արձարծումները նոր ժամանակներում՝ սկսած Հովհաննես Հովովից /17-րդ դար/ մինչև Ա.Մանուկյան և Թ.Ալեքսանյան: Իրավացիորեն նշվում է, որ խոսքի զարգացման հիմնախնդիրը մեր օրերում էլ արդիական է, և ՀՀ հանրակրթական դպրոցի ներկայիս չափորոշիչներում ու ծրագրերում ընդգրկված է սովորողների խոսքի և հաղորդակցական կարողությունների զարգացմանը միտված աշխատանքների իրականացման պահանջը՝ սկսած տարրական դասարաններից: Ի դեպ, ողջունելի է, որ աստենախոսության հեղինակը սովորողի խոսքի զարգացումը ինքնանպատակ մի իրողություն չի համարում, նա փաստում է, որ հարուստ բառապաշարը աշակերտի մտավոր ունակությունների, աշխարհայացքի ձևավորման հիմքն է, ուստի համարում է, որ ուսուցման ընթացքում պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, թե ինչ բառեր, դարձվածքներ, արտահայտություններ են մտնելու աշակերտների բառապաշար տվյալ թեման ուսումնասիրելիս:

Ելնելով այն հիմնադրույթից, որ լեզվի ուսուցման ողջ գործընթացում աշակերտների խոսքն ու մտածողությունը զարգացնելու նպատակով ուսուցիչը պետք է հաշվի առնի խոսքի ձևերն ու տեսակները, դրանց փոխկապակցությունն ու հարաբերակցությունը՝ աստենախոսը անդրադառնում է լեզվաբանական գրականության մեջ ներքին ու արտաքին խոսքերի վերաբերյալ տեսական հարցադրումներին և եզրակացնում է, որ ուսուցիչը պետք է կարողանա սովորողների մեջ ձևավորել ներքին

խոսքի հատություններ, որոնց շնորհիվ նրանք կկարողանան արտահայտել գեղեցիկ ու բովանդակալից խոսք: Բավականին հանգամանորեն անդրադարձ է կատարվում սովորողի բանավոր խոսքի զարգացման եղանակներին ու միջոցներին: Կարևորվում են քերականության ու ուղղագրության ուսուցումը, զրույցները, թեմատիկ նկարների, հեքիաթների բովանդակության վերարտադրումը, ուսուցման նոր տեխնոլոգիական միջոցները /QR ծածկագրի միջոցով/, էքսկուրսիաները և այլն: Այդ ամենի նպատակն է ձևավորել սովորողի բառապաշարի հարստություն, քերականական և ուղղախոսական կանոնների ճիշտ կիրառություն, խոսքի պարզություն և բովանդակայնություն, տրամաբանվածություն, արտահայտչականություն ու պատկերավորություն և այլն: Ատենախոսը խոսքի զարգացման կարևոր միջոց է համարում նաև սովորողների՝ երկխոսություն և մենախոսություն կառուցելու կարողությունների ձևավորումը: Երկխոսության տեսակներից առանձնացվում է դպրոցական բանավեճը, որի ընթացքում աշակերտները կկարողանան գնահատել իրենց խոսքը, ձեռք կբերեն դիմացինի հետ բարեկիրթ հաղորդակցվելու կարողություններ: Ինչ վերաբերում է մենախոսությանը, ապա կարևորվում են կարդացածի, տեսածի վերարտադրումը, պատմություն հյուսելը, առակների բովանդակության վերաբերյալ մտքեր արտահայտելը: Ատենախոսը համարում է, որ ուսուցման ընթացքում աշակերտների խոսքը հնարավոր է զարգացնել նաև գրական հերոսների խոսքի օրինակով:

Աշխատանքի առավել ընդգրկուն հատվածը վերաբերում է բանավոր խոսքի զարգացման մեթոդական համակարգի քննությանը: Իրավացի է ասենախոսը, երբ նշում է, որ դպրոցական համակարգում մայրենի լեզվի ուսուցումը ունի երկու կողմ՝ ա) հաղորդակցական ունակությունների, գրավոր ու բանավոր գրագետ շարադրանք ստեղծելու կարողությունների ձևավորում, բ) մայրենի լեզվի քեականական համակարգի իմացության ձևավորում, որը ենթադրում է տեսական լեզվաբանական գիտելիքների առկայություն: Հանրակրթական դպրոցում մայրենի լեզվի դասավանդումը, ըստ ասենախոսի, զուգակցում է այս երկու կողմերը, ընդ որում՝ տարրական դպրոցում և միջին դպրոցի 5-6-րդ դասարաններում առաջնությունը տրվում է հաղորդակցական կողմին: Հ.Խաչատրյանը միջին դպրոցում բավականին արդյունավետ է համարում

կառուցողական կրթության մեթոդներով դասավանդումը, ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ համագործակցությունը: Ընդհանրապես, դասավանդման մեթոդները պետք է գործադրվեն ստեղծագործաբար, դրանք պետք է հմտորեն համադրվեն և փոխլրացնեն իրար: Ատենախոսը ներկայացնում է միջին դպրոցում խոսքի զարգացմանը միտված մի շարք մեթոդների գործածման օրինակներ՝ վեր հանելով դրանց կիրառական յուրահատկությունները: Այնուհետև ատենախոսը խոսքի զարգացման հետ առնչվող հարցերը դիտարկում է մայրենի լեզվի դասագործընթացի բոլոր փուլերում, բոլոր թեմաների առնչությամբ: Բանավոր խոսքի զարգացման աշխատանքներում չափազանց կարևորելով գրական լեզվի ճիշտ արտասանության կանոնների պահպանման խնդիրը՝ ատենախոսը առավել հանգամանորեն քննում է բառապաշարի հարստացման հարցը: Վեր է հանում և մեկնաբանում իմաստաբանական, բառակազմական, դարձվածաբանական իրողությունների ուսուցման ժամանակ խոսքի հարստացման հնարավորությունները, ներկայացնում դրանց իրականացմանը միտված մի շարք առաջադրանքներ՝ ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր: Ձևաբանության ուսուցումը, ըստ ատենախոսի, կարևորվում է ոչ միայն իբրև քերականական գիտելիքների հաղորդում, այլ նաև որպես գրագետ բանավոր ու գրավոր խոսք կառուցելու միջոց: Ատենախոսը հենց այդ դիտանկյունով անդրադառնում է բոլոր խոսքի մասերին՝ հմտորեն վեր հանելով յուրաքանչյուրի ընձեռած հնարավորությունները: Հ.Խաչատրյանը խոսքի զարգացման խնդիրը դիտարկում է լայն ըմբռնումով, իրավացիորեն նշում է, որ այն չպետք է սահմանափակվի միայն մայրենի լեզվի դասավանդման շրջանակով, և միանգամայն տեղին է առաջադրված հետևյալ պահանջը. տվյալ դասարանում դասավանդող ուսուցիչները պետք է մշակեն խոսքի զարգացմանը նպաստող համատեղ ծրագիր: Ըստ ատենախոսի՝ խոսքի զարգացման համար պետք է ձևավորվի համակարգված մեթոդական շղթա, որը կկիրառվի բոլոր առարկաների դասագործընթացում, և սովորողի խոսքի զարգացումը կլինի լիարժեք, եթե այն դառնա ուսուցչական ողջ հանրության նպատակը: Ատենախոսն անդրադարձել է նաև տարրականից միջին դպրոց անցման ընթացքում խոսքի զարգացման հաջորդայնության ապահովման խնդրին: Նշվում է, որ սովորողների խոսքի

գարգացմանը մեծապես նպաստում են գեղարվեստական ստեղծագործությունների ընթերցանության ծավալների աստիճանական ընդլայնումը, խոսքի ոճական-քերականական կողմի հարստացումը, բանավիճելու կարողությունների զարգացումը, ուսուցման նոր մեթոդների կիրառումը և այլն:

Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ կատարված է մեծ ծավալի հաջողված աշխատանք: Ատենախոսը հանդես է բերել տեսական հարցեր քննելու և վերլուծելու ունակություն, ակնհայտորեն ունի գործնական աշխատանք կատարելու և արդյունքները գիտականորեն մեկնաբանելու շնորհ: Դպրոցում կատարված հետազոտական աշխատանքների արդյունքները, խոսքի զարգացման առաջարկվող քայլաշարային մեթոդը, աշխատանքը եզրափակող առաջարկությունները վկայում են այն մասին, որ ատենախոսը սիրով է կատարել իր աշխատանքը և անշուշտ գիտամանկավարժական ոլորտում դեռևս շատ անելիքներ կունենա: Աշխատանքը մեծապես շահում է տարաբնույթ առաջադրանքների, վարժությունների, աղյուսակների, պատկերների, գրաֆիկների առկայությամբ: Հեղինակը աշխատանքի ընթացքում արդյունավետորեն օգտագործել է խնդրին առնչվող մեծածավալ գրականություն՝ ինչպես հայ, այնպես էլ օտար: Նա ակնհայտորեն քաջածանոթ է ուսումնական ծրագրերին, չափորոշիչներին, ուսումնական բուն գործընթացին: Ատենախոսության շարադրանքը գրագետ է, տրամաբանված և գիտական:

Այնուամենայնիվ, ունենք մեկ-երկու նկատառում, որոնց վրա կցանկանայինք հրավիրել ատենախոսի ուշադրությունը:

1. «Խոսքի զարգացման տեսության պատմական ակնարկ» ենթագլխում, խոսելով հին շրջանի մտածողների դիտարկումների մասին, ատենախոսը միշտ չէ, որ կատարում է անհրաժեշտ հղումներ /տես էջեր 15-16, 16-17, 18, 19, 20, 22/. պարզ է, որ դիտարկումները բերվում են այլ աղբյուրներից, մանավանդ որ գրականության ցանկում այդ հեղինակների գործերն ընդգրկված չեն:

2. Առանձին դեպքերում առկա են բուն նյութից շեղումներ: Այսպես, 2-րդ գլխի՝ ներքին խոսքին նվիրված հատվածում առկա է երեխայի դաստիարակության, աշակերտի հոգեկերտվածքի ձևավորման մասին շարադրանք /52, 53 էջեր/, որը տեղին

կլիներ գետեղել, օրինակ, 1-ին գլխի «Խոսքի զարգացումը որպես աշխարհայացքի ձևավորման պայման» ենթագլխում: Մեր կածիքով՝ տեղին չեն նաև դատողությունները աշակետների կողմից տարբեր առարկաների ուսումնասիրման, ուսուցիչների վերաբերյալ դատողությունները (126-127 էջեր) «Միջառարկայական կապերը՝ որպես սովորողների բառապաշարի հարստացման և բանավոր խոսքի զարգացման միջոց» ենթագլխում:

3. Քիչ, բայց կան նաև անհաջող, ոչ գիտական ձևակերպումներ, ինչպես՝ «Ուսուցիչները պետք է հստակ պատկերացնեն, թե ինչ են դաստիարակում երեխային դաստիարակելիս» /էջ 133/, «եկանք այն եզրահանգման, որ խոսքը մեր էության մի մասնիկն է, սրտի, հոգու խորքից է բխում մարդու վերաբերմունքը այս կամ այն առարկայի, երևույթի, իրադարձության նկատմամբ» /էջ 166/:

4. Կա նաև բառի սխալ գործածություն. «անհատական բառարանի *հավաքագրում*» /էջ 171/:

Ինչ խոսք, այս նկատառումները որևէ կերպ չեն ստվերում կատարված արժեքավոր աշխատանքը և սկզբունքային նշանակություն չունեն:

Ատենախոսության եզրակացությունները տրամաբանորեն բխում են քննված նյութից: Սեղմագրում նեկայացված դրույթները համապատասխանում են ատենախոսության բովանդակությանը: Հրապարակված հոդվածները լիովին արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Այսպիսով, Հասմիկ Արամի Խաչատրյանի՝ «Բանավոր խոսքի զարգացման հիմնախնդիրը միջին դպրոցում» խորագրով ատենախոսությունն ունի տեսական և գործնական կարևորություն, գիտագործնական անհրաժեշտ նյութ է պարունակում խոսքի զարգացման առավել ընդհանուր խնդիրների քննության համար: Աշխատանքը բավարարում է ՀՀ ԲԿԳԿ-ի առաջադրած պահանջները և համապատասխանում է մանկավարժական գիտությունների թեկնածուի աստիճանաշնորհման 7-րդ կետի պահանջներին, ԺԳ. 00. 02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (հայոց լեզու)» մասնագիտության թվանիշին: Ատենախոսության հեղինակը՝ Հասմիկ Արամի

Խաչատրյանը, միանգամայն արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի
իր հայցած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

բանասիրական գիտությունների դոկտոր

Հաստատում եմ բ.գ.դ. Վ. Կատվալյանի

ստորագրությունը

ՀՀ ԳԱԱ Ն.Աճառյանի անվան

լեզվի ինստիտուտի գիտքարտուղար

բ.գ.թ. , դոցենտ

20.05.2024 թ.

Վ. Կատվալյան



Գ.Մխիթարյան